

Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր
տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ղազեյան



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ԿԱՐՈՅԻ ՀԵՐՈՅԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԷՎՐԻՍՏԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ

**ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և
պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ԱՐԵՎԻԿ ԿԱՐՈՅԻ ՀԵՐՈՅԱՆԻ՝ «ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԷՎՐԻՍՏԻԿ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ» խորագրով ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական
կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի
նիստում (22.06.2026թ., արձանագրություն N 6): Ամբիոնի նիստին մասնակցում էին
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լ. Հ.
Պետրոսյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Մ. Մարգարյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ռ. Վ.

Աղուզումցյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, ք.գ.թ, դոցենտ Մ. Գ. Մարգարյանը, ամբիոնի դասախոսներ Ա. Ղուշյանը, Լ. Գրիգորյանը, գործավար Ս. Յ. Ավագյանը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ թվային միջավայրի ընդլայնումը, տեղեկատվական հոսքերի արագացումը և շուկայի մասնակցության մատչելիության աճը հանգեցրել են նրան, որ ներդրումային ընտրությունները դարձել են լայն շրջանակի անհատների ամենօրյա որոշման ընդունման վարքի մաս: Այս իրողությունը պահանջում է խնդրի դիտարկում ոչ միայն արտաքին շուկայական պայմանների, այլև այն հոգեբանական մեխանիզմների տեսանկյունից, որոնց միջոցով անհատը կողմնորոշվում է տեղեկատվական բազմազանության, անորոշության, ռիսկի և ժամանակային ճնշման պայմաններում: Ներդրումային վարքը հոգեբանական գրականության մեջ հաճախ ուսումնասիրվում է մասնակի ձևով կամ առանձին կողմնակալությունների կամ ռիսկի նախընտրությունների, կամ հուզական արձագանքների մակարդակում:

Սակայն հեղինակը նշում է, որ համեմատաբար քիչ են այն ուսումնասիրությունները, որոնք ներդրումային վարքը դիտարկում են որպես անձնային-տիպաբանական առանձնահատկությունների, ճանաչողական նախընտրությունների, էվրիստիկական կարգավորման, ֆինանսական գրագիտության, ռիսկից խուսափման, անորոշության հանդուրժողականության և սիմվոլիկ իմաստավորման փոխկապակցված համակարգ:

Ելնելով թեմայի արդիականությունից՝ առենախոսն իր առջև նպատակ է դրել ձևավորել արժեթղթային փոխանակման գործարքներում ներդրումային որոշումների հոգեբանական կարգավորման ինտեգրատիվ բացատրական շրջանակ, որի միջոցով հնարավոր կլինի հասկանալ, թե ինչպես են անձնային-ճանաչողական առանձնահատկությունները, ֆինանսական գիտելիքներն ու վարքային կողմնակալությունները մասնակցում ներդրումային ընտրության կառուցմանը անորոշության, ռիսկի և տեղեկատվական բարդության պայմաններում:

Առենախոսն առաջադրել է վարկած, ըստ որի՝ արժեթղթային փոխանակման ոլորտում որոշումների ընդունումը պայմանավորված է ոչ միայն իրավիճակային և

տեղեկատվական գործոններով, այլև համեմատաբար կայուն հոգեբանական առանձնահատկություններով: Ենթադրվում է, որ անձնային-տիպաբանական և ճանաչողական նախընտրությունները կապված են ներդրումային ոճի, էվրիստիկական կարգավորման, ռիսկից խուսափման և անորոշության հանդուրժողականության հետ, իսկ ֆինանսական գրագիտությունը հանդես է գալիս որպես այդ փոխկապակցվածությունները պայմանավորող կարևոր գործոն:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, ներդրումային վարքի կոգնիտիվ-սիմվոլիկ մոդելի ներկայացումից, կիրառական առաջարկներից, հետազոտության սահմանափակումներից:

Ատենախոսության ներածության մեջ ներկայացված են աշխատանքի նպատակը և խնդիրները, հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, տեսամեթոդաբանական հիմքերը, կիրառված մեթոդները, ընտրանքի նկարագիրը, գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, փորձաքննության տվյալները և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Սպառողական վարքի և որոշումների կայացման հոգեբանական օրինաչափությունները» վերտառությամբ վերլուծվում են անձի և որոշումների կայացման փոխկապակցվածությունը, հատկորոշիչ և տիպաբանական մոտեցումները անձնային կառուցվածքի ուսումնասիրության մեջ, անձը որպես իմաստավորման և ինքնակարգավորման համակարգ, MBTI շրջանակը որպես ճանաչողական կազմակերպման մեկնաբանական մոդել, որոշումների կայացման ընդհանուր հոգեբանական մեխանիզմները, ճանաչողական աղճատումները, էվրիստիկաները, հեռանկարի տեսությունը և աղմուկի դերը որոշումների կայացման գործում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Արժեթղթային ներդրումների սիմվոլիկ սպառողական և անձնային հիմքերը» վերտառությամբ դիտարկվում է ներդրողը որպես անձ և սպառման համակարգի մասնակից, իսկ արժեթղթային ներդրումը՝ 8

որպես ոչ նյութական սպառման առանձնահատուկ ձև: Վերլուծվում են սիմվոլիկ սպառման տեսությունը, սոցիալական ինքնության և սպառման փոխկապակցվածությունը, արժեթղթային փոխանակման համեմատությունը սովորական սպառման հետ, ինչպես նաև ֆինանսական արդյունքի և հոգեբանական պարզևի տարանջատումը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Ներդրումային որոշումների հոգեբանական կարգավորումը արժեթղթային շուկաների ռիսկային և տեղեկատվական միջավայրում» վերտառությամբ արժեթղթային շուկաները վերլուծվում են որպես ոչ միայն տնտեսական, այլև հոգեբանական և սոցիալ-իմաստային միջավայրեր:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ «Բաժնետոմսային փոխանակման որոշումների հոգեբանական առանձնահատկությունների և էվրիստիկ կարգավորիչների փորձարարական ուսումնասիրություն» վերտառությամբ ներկայացվում են հետազոտության կառուցվածքը, ընտրանքը, կիրառված մեթոդները, որոնողական և փորձագիտական փուլերի արդյունքները, հիմնական էմպիրիկ տվյալների վերլուծությունը, N/11311 տեսակների և ներդրումային ոճերի միջև կապերը, ֆինանսական գրագիտության դերը, էվրիստիկաների և կողմնակալությունների վերլուծությունը, ինչպես նաև ներդրումային վարքագծի կոգնիտիվ-սիմվոլիկ մոդելը:

Իրականացնելով ծավալուն փորձարարական և տեսական ուսումնասիրություն՝ ատենախոսը հանգել է եզրակացությունների:

Հետազոտությունն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն, առանձնանում է գիտական նորույթով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 3 հրապարակումներում:

Սեղմագիրն ամբողջությամբ արտահայտում է ատենախոսության բովանդակությունը:

Աշխատանքն առանձնանում է տեսական և փորձարարական ծավալուն ուսումնասիրությամբ, հետազոտական ընտրանքով, հետազոտության արդյունքների գրագետ վերլուծությամբ:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել որոշ դիտարկումներ, որոնք առավել մանրամասն պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես՝

1. Աշխատանքի հետազոտական մասում նշվում է, որ տարիքային բաշխման տեսանկյունից առավել մեծ խումբը 30-40 տարեկաններն են, իսկ առևտրային փորձի տեսանկյունից 1-4 տարի փորձ ունեցողները: Նպատակահարմար կլիներ մեկնաբանել անձի նշված տարիքային միջակայքում և առևտրային 1-4 տարվա փորձառության պայմաններում կայուն տնտեսական ինքնության և որոշակի ազատ ֆինանսական ռեսուրսների առկայության ցուցիչները:

2. Աշխատանքում հետաքրքիր կլիներ դիտարկել հուզական փոփոխությունների դինամիկան ներդրումային փորձի պայմաններում:

3. Ատենախոսության մեջ հետազոտության մեթոդիկաները ներկայացված են անգլերեն լեզվով: Նպատակահարմար կլիներ մեկնաբանվեր դրանց համապատասխանությունը հետազոտական գործընթացին:

4. Ատենախոսության մեջ մտածողության առանձնահատկություններին անդրադարձ կատարված չէ, մինչդեռ հիմնահարցը քննարկվում է անձի կոգնիտիվ ոլորտի տեսանկյունից:

Հիմք ընդունելով թեմայի արդիականությունը, կատարված հետազոտության ծավալը, կիրառական նշանակությունը՝ ԱՐԵՎԻԿ ԿԱՐՈՅԻ ՀԵԲՈՅԱՆԻ՝ «ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԷՎՐԻՍՏԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ» ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համարել

համապատասխան ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ «ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ կարևոր խնդրի լուծում, իսկ Արևիկ Հերոյանն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի

հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Լ. Լ. Պետրոսյան

Նիստի քարտուղար՝



Ս. Ավագյան

Ամբիոնի վարիչ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ս. Լ. Պետրոսյան

